

ՀԱՅՐԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ՌՈՌՈՐԱՆ ՄԱՍԻՆ

Է. Հայկական ջրաբաշխական ձեռնարկները միջին դարերից ի վեր.

Ուրարտա-խալդիացիներն իրենց քաղաքակրթական դերը վերջացրին Ն. Բ. վեցերորդ դարից, իրենց տեղը զիջելով Թրակիայից Փոխգիայի վրայով ներս խուժող Արմենո-Հայերին, որոնք անշուշտ իրենց մէջ ձուլեցին տեղական հին ժողովուրդներից շատերին, սկզբում Հետիտ-ներին և ապա Ուրարտացիներին՝ Այդ ձուլման պրոցեսի և նոր ժողովրդի առաջ գալու և նախորդների երկրներին տիրանալու հանգամանքները դեռ ևս անյայտութեան թանձր քողով են ծածկւած։ Բազմաթիւ են եւրոպացի մասնագէտների հետաքրքումները, բայց հարցը կարող են լուծել միայն իրական փաստեր, որ ծածկւած են երկրի խորը կուտակումների տակ։ Հետիտների և Սալդերի այդպիսի աղբիւրներով այժմ քաջամանաթ դարձած պատմութիւնը այդ է ապացուցանում։ Մինչև Գրիստոսի վեցերորդ դարը, մի չափազանց երկար անջրպետ, ոչ գրաւոր յիշատակարաններ են յայտնական ջրաբաշխական աշխատանքների մասին մեզ տեղեկութիւններ հաղորդում և ոչ էլ երկրի մէջ գոյութիւն ունին ձեռնարկներ, որ մեզ տրիպլին անյայտ մնացած իսկական հեղինակներին որոնելու ինչպէս Բեռլին գետի և Շամիրամ սուրբ օրինակներն են ցոյց տալիս և ոչ էլ այդ ուղղութեամբ ուսումնասիրութիւններ կան կատարւած։

Ասել թէ այդ 1200 տարիների շրջանում մեր երկրում ջրաբաշխական գործեր չեն կատարւել, անկարելի է. մեր երկրում առանց արհեստական ոռոգման դժար է քաղաքակրթական կենցաղ երեւակայել, միայն այս պիտի նկատել, որ հաւանական եղած գործերը փոքր և աննշան ձեռնարկներ էին, կամ հների կարկառանքներ։

Ուղիղ այդպէս փոքր ձեռնարկներ են մեզ ներկայանում հայ զանազան գասակարգի մարդկանց ջրաբաշխական կատարած գործերը, որոնց յիշատակութիւնը պահւած է կամ հայ պատմագիրների մօտ, սկսած վեցերորդ դարից, կամ եկեղեցիների ու վանքերի պատերի վրայ փորագրւած։ Բաւական յաճախ են տեղեկութիւններ նաև ձեռագիրների յիշատակարաններում, բայց բոլորը ի մի հաւաքել մանրագին կանոնաւորութեան առարկայ է. մենք բաւականանում ենք գլխաւորապէս արձանագրական նիւթերով։

Այդպիսի արձանագրական յիշատակարաններ բաւական շատ են, որոնց օրինակները, թէև թերի արտագրութիւններով և ոչ լրիւ, ի մի հաւաքւած տպագրւած են Կ. Կոստանեանի Վիմակն Տաւրիքի ժողովածուի մէջ, տպագրւած Պետերբուրգում 1913 թ.։ Յարմարութեան համար արձանագրութեան առեւակները բաժանում ենք այսպէս. 1.— Նոր առուներ կամ աղբիւրներ հանելու փաստեր։ 2.— Արգէն գոյութիւն ունեցող առուների նորոգութիւններ։ 3.— Ջրային վեճերի կարգաւորում։ 4.— Բարեգործ անձանց նուիրատուութիւններ զանազան վանքերի և եկեղեցիների։

1. Նոր առուներ հանելու փաստեր.

ա. Ներսէս Շինող մականունանեալ կաթողիկոսը Վաղարշապատում, Հռիփ-սիմէի վանքից մօտ երկու և կէս կիլոմետր հարաւ-արեւելեան մասում արդէն գոյութիւն ունեցող չորս վանքերից զատ շինում է հինգերորդ նորը, Զուարթնոց տնուանով։ Հոյակապ և չքեղ եկեղեցուն կից

շինել է տալիս կաթնղիկոսարան և շրջապատի գաշտի վրայ ընդարձակ այգիներ տնկում: Այդ այգիների ոռոգման համար տասներորդ գարու Յովհաննէս պատմագիր կաթնղիկոսի վկայութեամբ, Գասախ գետից նոր առու է կանուս և բերում հասցնում իր նոր տնկարանը:

Զուարթնոցի պեղումները աներկայ ցոյց տալին, որ այդ առուն իսկապէս գոթերին է ունեցել, որովհետեւ բացւեցին ջրի կանոնաւոր հետքեր, և պեղումներ կատարող իտալի վարդապետը հին առուի հետքերով նոր առու փորեց և բաւական ընդարձակ մաս վերստին այգիներով եւ ծառատունկերով ծածկեց:

Պատմագրի հաղորդածը կարօտ է որոշ ճշտման: Վաղարշապատը դարեր առաջ արդէն ոռոգւում էր Գասախ գետի, հաւանական նաեւ Զազու գետերի ջրերով: Տրդատ Թագաւորի ժամանակ Հռովմից Հայաստան փախած կոյսերը չորրորդ դարում յիշեալ Հովփսիսմէի և Նրանից ոչ հեռու գէպի արեւմուտք ընկած Շողակաթի վանքերի շրջակայքում գտնւած հնձանեւրոս էին ապաստան գտել, որտեղ Նրանք նահատակեցին և սրտեղ քեռոյ վանքերը շինեցին: Հետեւապէս արդէն չորրորդ դարում Վաղարշապատի ներկայ այգիների տեղում գործնել խաղողի այգիներ էին տնկած եւ Գասախ գետի ջրով ջրւած:

Ներսէս Շինողը վիսաւոր առուի մի ճիւղն է տարել իր նորակառոյց եկեղեցու մօտ:

Բ. Նոր Բայազէտ գաւառի, ներկայումս Մարտունու շրջանի Ներքին Ալուլայու անտամբ գիւղի արեւելահիստային կողմում մի գեղեցիկ հովտի մէջ շինւած է Հայաստանի չափազանց բազմաթիւ վանքերից մէկը՝ Վանեկամու անունով յայտնի, որի մանրամասն նկարագրութիւնը յիշատակարաններով տալիս են Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեան իր «Գեղարքունիք» գրքի մէջ և աւելի լրիւ Ծր. Լուլայեան իր հրատարակած Ալզ. Հանդէսի 1913 թ. XIV. էջ 51-54, առաջ բերելով վանքի շինութեան կարեւոր յիշատակարանը: Սրա մէջ հաղորդւում է թէ՛ շինութեան և թէ՛ մեկ հետաքրքրող ջրամատակարարման մասին: Եկեղեցին շինել տընաղն էր «Մայաուհ Բագրատունի Հայոց սպարապետ տէրանց տէր, որդի Աշտ-

տոյ Հայոց Թագաւորի ժամանակ» Հայոց Թագաւորին մեծին Սմբատայ հաւաքատեղը իմիջ . . . վերակացու և տեսուչ առնելով գլխոյ իմ Մարիամ Սրահեայ տիկին . . . »:

Շապուհ Սպարապետը իր շինել տուած եկեղեցուն գիւղերով և կալուածքներով նուէրներ տալով հարստացնում է.

«Նւ հառու գ. գեղոյս սահման Կոթոյ քարն, Շաւառնահողն, Գիտամէջն, Կթանոցն, Գիտաւանաց ծովն, մկ. դրամ ի կոթայ քարէն, շլ. ի Բոտեկաց, ոկ. յԱղբորդանաց, ջղ. ի Կարբին գետեհն և նաւեհն»:

«Տր. Սողոմոն տր. Աթանաս, Սմբատ Թագ. աստ ամով. քնեայ ջուրս յմնճուսաց Դաւթի ձեռք . . . դոր յառաջ բերած էր. . . »:

Այս վրաբերութեան յիշատակութիւնը, որ մի տեսակ հին առուի նորոգման կերպարանք ունի, սրա հետ միասին գետերի և նաւերի, խիստ անորոշ են և միայն նոր ուսումնասիրութիւնն առ տեղեւան կարող է պարզել ջրի սկզբնական ակն ու անցած առուի ուղղութիւնն ու նպատակը: Մեզ համար կարեւորն է, որ հայկական իշխանութեան ամենաբարձր զինքերի վրայ կանգնած անձից իրենց երկիրը շինացը ներու համար առուներ են անցրել և եկեղեցու շինութեան հաւասար յիշատակելի գործ համարել:

Թ. Ավդաբեկեանը հմտալից մի յօդւած ունի հրատարակած Հ. Խ. Ս. Հ. ի Գիտութեան և Արուեստի ինստիտուտի տեղեկագրի (1931ի Հ. Գ. էջ 90-112) մէջ՝ «Նոր Բայազէտի հին առուներն ու շրջակայքի ոռոգման հեռանկարները» վերնագրով:

Յօդւածի մէջ այս արձանագրութեան մասին տեղեկութիւն չկայ. նա տիրիշ աղբիւրներով և իր անձնական ուսնադպնին տեղագրական ուսումնասիրութիւններով գտել է, որ Նոր Բայազէտի շրջանում հընուց գոյութիւն են ունեցել առուների շատ աւելի զարգացած ցանցեր, որոնց օժանդակութեամբ երկրի աւելի մեծ թւով գիւղերը կարողացել են պահպանել իրենց գոյութիւնը, և որոնց բաւական խոշոր թիւը ներկայումս, հին վրատար երակների ոչնչացմամբ, ամայացել և անմարդաբնակ են դարձել: Ռուս և հայ հեղինակներ ԺԹ - ի

գարում տեղեկություններ հաղորդել են միայն — երեք հին առուի մասին: Վերադարձված առուների վրայ, մենք, գրում է Ալգյալընկեանը, 1927 թ. սկսած մեր հետախուզությունների հետևանքով, առկայությունը ենք և առկայություն ենք հոթ հին առու: Իբրև հղրակացություն իր ձեռք բերած կարևոր տեղեկությունները, առաջարկում է վերանորոգել այդ հին առուները և բնակաշեն դարձնել — մօտ 75 քառակուսի կիլոմետր — ընդարձակ մի տարածություն: Իսկ հղրակացության միանգամայն ընդունելի երկու նախագաղտություններն են. — Հին առուները պետք է դադարեն հրետություն յուշարձաններ լինելուց և դառնան կենդանի կենսաբան գործոն երակներ: Հին առուները մեր երկրի օսկի հանքերն են գետնի երեսին:

գ. Յակոբ Եպիսկոպոս, առաջնորդ և մետաղագիտ Սիւնեաց նշանաւոր Տաթևի վանքի, մի առու է հանում, որ իր կարեւորությունից եւ խոշորությունից մասամբ յիշեցնում է Ուրարտայիների գործը: Նրա կատարած գործի մանրամասնությունը յիշատակում են իր յաջորդներից Յովհաննէս Եպիսկոպոսը, ժամանակի բերմամբ փաստած առուի նորոգողը, և այդ առևի մանրամասն Ստեփանոս Եպիսկոպոս Օրբելեան պատմագիրը:

Յակոբը Դանիցի էր, Յովհաննէս պատմագիրը կաթողիկոսի եղբորորդին և նրա ձեռնառունը: Նրիտասարգ հասակում եպիսկոպոս ձեռնադրելով, կարգում է Տաթևի վանքի վանահայր և Սիւնեաց թեմի առաջնորդ, քառասուն տարիների ձիգ ժամանակաշրջանում 918—958: Նա սիրում է շինարարություն: ամենից նշանաւորը Վարարական առուի շինությունն է: Օրբելեան պատմագիրը այդ մասին այսպէս է պատմում.

«Սա զանազան առնէ զշուրքի Ձագէ-ձորայ, որ Վարարակն կոչի. ի տեառն Փիլիպպէն որպէս Վասակայ Սիւնեաց իշխանի ընդ Բժի գրամի (12,000 գրամի) և մի լուսաւոր ջաւահիրի . . . և բերաւ ի Յաւուսն որ հանդէպ վանիցն, յայնկոյս գետոյն, և արար զամենայն վայրն առապար և փալից վարկուն և անկալից: Տնկեաց բազում այգիս և որթն սորենկս. էարկ տունկս ի զանազան պտղաբերաց. ձիքննիս

և թզենիս և նոնհնիս. և յամենայն մրգաբերաց արար դրախտս զարմանալիս: Եւ զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծառովք և քաջուղէլ որթոյն, ի վայելումն եղրայրութեանն և ի պէտս ամենայն կարօտելոց և ողջատացոյ:

Տաթևի վանքի արխիեպսկոպ, գուցէ նաև քարերի վրայ արձանագրւած, կային առուի շինությունից յիշատակարանը, միանգամայն համապատասխան պատմագրի տեղեկությանը, որովհետև նա այդ վանքի վանքի էլ է մոռնել պատմություն մէջ:

«Ես Յակոբ շնորհիւն աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գնեցի զ Վարարակ ջուրն յաստուածապահ տեառն Փիլիպպէն, Սիւնեաց տեառնէ, ընդ Բժի գրամի և մի պատուական գոհարի. և բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին աւզնականութեամբն ամի զշուրք ի լեռնէն Ձագէձորայ և բերի ի Վարարսն. և տնկեցի որթն սորենիս և այգիս վայելուչս և գրախոս բազմածաղիկս և պտղալիցս, ի վայելումն սուրբ հայրապետաց որ ի սուրբ աթոռս հաստատին և սուրբ ժողովոյս և ամենայն հաւատացելոց Գրիստոսի...»

Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ոչ Նուրեհեան, ոչ Ռոտանանեցեան, ոչ Շնհերացեան կամ Հայեցեան, ոչ այլ մարդոյ, ոչ յարա կտրել և ոչ ի մարդ և ոչ պարտիկ ջուր տալ. զատ ի մասակէզ ըմպելոյ մարդոյ և անասնոյ:

Եւ թէ ոք յանդգնի և զայս ջրոս կտրէ, այնպիսին նզովալ լիցի յԱստուծոյ և ի սուրբ նշանէս և Եթէ (318) հայրապետացն որ ի Նիկիայն գումարեցան և ի մէջն, և բաժին նորա ընդ ուրացողս և կախարդս լիցի յասուր անել տոնինի Գրիստոսի, և ընդ սատանայի և հրեշտակաց նորա ճարակ լիցի անշէջ հրոյն տանջանաց, ուր հուր նոցա ոչ շիջանի և որդն նոցա ոչ վախճանի:

Եթէ թուականիս (= 932 թ.) գրեցաւ զճիւղս այս իմով ձեռամբս և կնքեցաւ մեր դովադական մատնեաւ ի կամս աստուծոյ:

Վանական արխիեպսկոպ մէջ պահւած էր նաև առուի վաճառող Փիլիպպէ իշխանի

պարտաւորագիրը, այսպիսի բովանդակութեամբ.

«կամաւն աստուծոյ եւ Թիլիպպէ որդի տեառն Վասակայ Սիւնեաց տեառն, իմոյ կամաւորութեամբն վաճառեցի զՎարադակնաց ջուրն սուրբ Գրիգորին, որ իմ պապուն տէր Թիլիպպէին շինեալ էր, ի սուրբ եպիսկոպոսարանն Տաթեւոյ: Եւ գնեաց Յակոբ Սիւնեաց եպիսկոպոսընդ ԲԺԹ դրամի եւ մին մեծագին գոհարի, և վճարեաց զամենայն գինն ողջամբ: Եւ ես առեալ իմ զգանձս և զմին գոհարն ի Յակոբայ Սիւնեաց եպիսկոպոսէ և ապիկար եմ ես և իմ զաւակունքս և ազգայինք յայդ ջրոյդ յայսմանէն մինչև յաւիտեանս ժամանակաց: Եւ չկայ Նորեցեաց կամ Խոտանանեցեաց, կամ Շնհերայ և Հայեցեաց յայդ ջրոյդ հաշիւ. ոչ շատ և ոչ սակաւ. ոչ յարտ հատանիլ և ոչ ի մարդ զատել. որ մարդ և անասուն ջուր ըմպեն ի մատակէդ:

Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանէս ստեմբ և կամ յայդ ջրէդ կտրիլ խորհիմք յարտ կամ ի մարդ կամ յայլ ինչ, յաստուծոյ և ի սուրբ Նշանէդ նշովեալ եղիցիմք և զվերոգրեալ անէծսդ տեառն Յակոբայ անմահ կենօք ժառանգեսցուք: Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիդ և սուրբ աստուածազգեաց հայրապետացդ»:

Վարադական ջուրը գտնուում է Գորիս քաղաքի հովտի ամենաբարձր տեղում, որտեղից բխում է Գորիսի գետի աւելուքները, մօտ 10–12 կիլոմետր տարածութեամբ: Բարձր դէպի հիւսիս ջրին աւելի մօտ է Վերինչէն գիւղը, Ուշթափայ կոչւող լեռնազաւթի արեւելահիւսիսային բարձունքներում: Ուշթափան ձգւում է հիւսիս–արեւմտեան ուղղութեամբ, որտեղ գետի հոսանքին զուգահեռ, աստիճանաբար ցածրանալով, իսկ Որոտն գետի և Գորիսի հովիտի ուղղութեամբ անդնգախոր կտրւածքներ ունի, երբեմն ցից ժայռերով պարսպանման կտրուած: Բազմաթիւ հալկական խոշոր գիւղեր, հովիտներում և անգուսնդների մէջ շինւած, Ուշթափայի արօտներով և վարելահողերով են խրենց ապրուստը հայթաթում: Ուշթափան բնակութեան համար հիմնալի յարմարու-

թիւններ ունի, սակայն դարերի անապահով վիճակը, բայց նաև ինքնահոս աղբիւրների առատութիւնը և կլիմայի մեղմուածութիւնը թելադրել են մարդկանց գիւղեր շինել ամենամասնաւոր, զժապարձ և ամեն հանգստութիւնից զուրկ մասերում, գլխաւորապէս թշնամու յարձակումներից և ձմեռայն բքարեր քամիներից ազատ լինելու յոյսով: Ուշթափան բազմաթիւ աղբիւրներ ունի, մանաւանդ նրա աւելի բարձր, լեռան ստորտաներին մերձակուր մասերում, իսկ Պատմագրի յիշած գիւղերի մերձակութեամբ, ջրերը պակաս են և ամառայ շոգերին մարդ ու անասուն բուսականաչափ նեղոււմ են խմելու ջրի պակասութիւնից:

Յակոբ եպիսկոպոսը իր առուն շինել է Ուշթափայի ամբողջ երկարութեամբ, հիւսիսից հարաւ–արեւմուտք, մօտաւորապէս 30 կիլոմետր տարածութիւնից: Գաշտի բնական թեքութիւնը և հարթութիւնը առաւել փորձան գործը բնականաբար կը դիւրացնէին, բայց որովհետեւ դաշտի մէջ յաճախ են հեղեղատներ և բլրանման բարձրութիւններ, գետինը տեղ տեղ ամուր քարերով է ծածկւած. առանց բարդ աշխատանքների անկարելի էր գործը գլուխ հանել: Մասնաւորապէս հետախուզութիւնը կ'պարզի թէ հեղեղատների և այլ գլուխութիւնների առաւել շինարարն ինչպէս է հարթել: Կարեւոր է այդ հետախուզութիւնը Ուրարտեան արուեստի հետ համեմատելու համար:

Առուն գործում էր մինչև 14րդ դարը, երբ Օրբելիանն իր նկարագրութիւն է տալիս. մասնաւորապէս որ Օրբելիանի նախորդ վանահայրը, Յովհաննէս եպս.ը, հիմնական նորոգութիւններ էր կատարել: Նորոգողն արձանագրութեամբ յաւիտացրել է իր աշխատանքը, չճշտանալով նախորդին: Ուշթափայի վրայ, Վերինչէնի դէմ յանդիման տեղում, մի ժայռ կայ ցցւած, որի տակով առուն էր անցնում: Այդ ժայռի $2,26 \times 0,63$ մետր բնականից հարթ երեսին նորոգողը գրել է տւել իր արձանագրութիւնը. «Յամի յորում էր թվ. ՁԽԳ (= 1294) ես տէր Յովհաննէս կամաւն աստուծոյ եւ աղաւթիւր հոգեւոր հաւր մերոյ տէր Հայրապետա տարա զՆուրս Վարադական ի Վարդուհն գոր աստուածապա-

տիւ եւ հոգեւոր տէր Յակոբ զնեալ էր եւ տարեալ բազում աշխատութեամբ եւ արդեամբք, զխափանեալն ի բազում ժամանակաց կրկին նորոգեցաք, յիշատակ մեզ եւ նախնեաց մերոց որք հանդիպէք սուրբ երրորդութեամբ յիւնեցէք ի Գրիստոսն:

Այդ երկու շինարար անձերի գործը այլ եւս գոյութիւն չունի. պատմական յիշատակարաններ չնորհիւ միայն գիտենք այդ աչքի ընկնող գործի մասին:

Վարդուարթ ցարգեւոյ դարձած վայրը գտնուում է Տաթևի վանքի դէմ յանդիման դէպի արեւելք, Որոտն գետի ձախ ափին, Նշանաւոր Սասանաց կառնիքի սկսող դռնովայրերում: Ուշթափայի պառնգին զտունող պարսպանման ժայռի ստորոտում անցկացրած առճիւի փորւածքն է մնում, մի հին մատուռի աւերակ եւ փլած պատերի շարքեր, որով բաւական թեք զառիւյրները կտրատուել եւ յիշած այգիների ու տնկարանների տեղիք են դարձրել:

Հայաստանի անցեալ գիւղատնտեսական մշակութեան համար ուշադրութեան արժանի տաւելաներ են խաղողի որթի, պտղատու ծառերի եւ ծաղիկների յիշատակութիւնը. մանաւանդ այն, որ մեր երկրի մէջ Տաթևի ձորում մշակուել են ձիթենիներ, որ այժմ գոյութիւն չունին:

դ. Արագած լեռան ստորոտում զտնուում է հնագոյն դարերից իր անունն անփոփոխ պահած Թալին գիւղը, որի մէջ կան եօթներորդ դարուց պահած երկու կիսաւերակ հիկեղեցի, մէկը փոքր մատուռ, միւսը մեծ կաթնաղիկէ, եօթներորդ դարու հայկական լաւագոյն ճարտարապետութեան յուշարձան եւ ուշագրաւ գերիզմանային կոթողներ: Տաւարի մայր սիւններից մէկի վրայ 783 թականից փորագրւած է այսպիսի մի յիշատակարան.

«ՄԱՐԹ Թաւականութեան հայոց եւ Ուխտաւոր վանականս եւ Տուֆի եղբայր իմ բերաք աղբերականիս ի Գարկապ նուր/ա/տէն ի Թալին. թէ յիշխա(ն)աց ոք խլել իմ մզկացս պարտական եղիցիս:

Եիշատակարանը սկիզբը արտադրել էր եւրոպացի ճանապարհորդ եւ տպուէլ էր սխալներով Այրարատում: Յետոյ առ տեղեւան մենք կրկին քննեցինք եւ Սոկրատի պատ-


մութեան յառաջաբանում 1892ին հրատարակեցինք, բայց դարձեալ մութ էր մնում, թէ արդեօք նուբասէն պիտի կարգալ, թէ ոչ: Եւամենայն զէպս հայ ջրաշինարարութեան արձանագրութեանց մէջ սկզբնական բնագրով հնագոյն արձանագրութիւնն է, 783 թ., որից աւելի հինը մեզ ծանօթ չէ: Թալինը իր շրջակայքով մեր երկրի կարեւոր տեղերիցն էր, թէեւ ներկայումս բաւական խեղճ վիճակ ունի: Հայկական ճարտարապետութեան գեղեցիկ մնացորդներ, ալ միայն Թալինում, այլ եւ նրա ձօտակայ տեղերում, Մաստարայում, Ներքին Թալինում, Իրինդում, Թալինում կամ Արուճում, Աշնակում եւայլն, խօսուել վկաներ են, որ վեցերորդ դարից մինչեւ իններորդ դարը, այդ շրջանում բազմաթիւ եւ լաւ կինցադով տարող ժողովուրդ կար, որ կարող էր գոյութիւն ունենալ միայն երկրի տրդինաւէտ եւ յաջող մշակութեամբ եւ որ առաջնակարգ տեղ էր տւում ուղղման գործին: Այդ ենթացողութիւնը հաստատում է Կոշի ջրային վէճի խնդիրը, որի հետ կ'ընթանանք:

Ուխտաւոր վանականը Թրտեղից է ջրեր բերել Թալինի համար, այժմ այդ տեղը յայտնի չէ. Թրտեղ էր գտնուում Քարկապիցում բաւական, ընդունելով որ այդ ընթիւրցուածն է ուղիղը: Տեղական ժողովուրդը, ոչ հին բնակիչներ, այլ նոր գաղթականներ, անտեղեկ են հին բնակիչների մէջ պահող սովորական աւանդութիւններին եւ նրանց ցուցմունքը առանձին կարեւորութիւն ունենալ չի կարող. իսկ նրանք ցոյց են տալիս հիկեղեցուց մի կիլոմետրաւափ դէպի սարը բարձրացող լեռնահովիտ, որի առաջը հնուց պատնէշ կայ քաշւած, իսկ այժմ հողով է լցւած եւ մշակելի արտ է: Նրանց ասելով այդտեղ հնում արհեստական ջրամբար էր շինւած, վարնան ջրերը հաւաքելու համար: Հովիտը, որ անձամբ քննեցինք, բաւական փոքր է եւ նրա մէջ հաւաքած ջրերը մեծ բան չէին կարող լինել. սակայն անկասկած է, որ դա իսկապէս ջրամբար է, փոքր մասշտաբի: Ուշադիր հետախուզութիւնը գտնեց այդպիսի ջրամբարներ աւելի ի յայտ բերել, բայց թէ արդեօք դա է Ուխտաւորի շինածը, թէ տակաւին անձանօթ մնացած Գարկապի ջրերն է բերել, մնում է չլուծ-

ւած: Ուստի մենք բաւականանաք միայն ջուր բերելու փաստն արձանագրելով:

Ե. Էջմիածնի Թանգարան է բերած բազալտ քարից մի մեծ կոպիտ քար, համարեա անտաշ վիճակում, ջրային շինարարութեան յիշատակարանով: Քարի վերեւի մասում, մէջտեղը փորւած է մի խաչ և դրա շուրջն ու ներքեւի ազատ շերտի վրայ, չափազանց սնկանոն եղանակով, առանց տողերի և միատեսակ ուղղութեան, փորագրւած է յիշատակարանը: Գրերի մի մասը գլխագրեր են, մի մասը բոլորգիր, շղագրին մօտեցող:

Այդ արձանագրութեամբ ռմբ ԲՈՐԷ Ի Թագաւորութեան Սինքեֆերմա ջրի առու է հանել ՆԽԱ (= 992) թւին:



ի քաղաքս քաղաքս
քաղաքս քաղաքս
քաղաքս քաղաքս
քաղաքս քաղաքս

ակամ եղով հիւս (հոյս) ջրի | զառուե
վաս (sic) | մեղաց | հանել | յանուե |
ն | ՆԽԱ (= 992) | Ի Թագաւորութեան
սինաք | էրեմա ես քոր | քաղա-
նեց խաչ:

Արձանագրութիւնը գրւած է երկաթագրով և հնաձե բոլորգրով. կարդացւում է զժաւորութեամբ և հասկանալի է, որ առաջի հրատարակութեան մէջ սխալներ կան: Հնութեամբ, գրերի ձևով և բովանդակութեամբ կարեւոր է: Այս քար բերւած է Էջմիածին սիգորի գէղից, որի առ-

ջիւէն կ'անցնի փոքրիկ առու մը, սկիզբն առնելով Ղարաղալայից: մի տեղեկութիւն որ հաղորդում է Կ. Բասմաջեանը (Բանասէր, 1901, էջ 130-131), որ հրատարակել է քարի լուսանկարը և արձանագրութիւնը: Այս տեղեկութեամբ պարզւում է, առաւին Գորքը հանել է Ներսիսի սղ ասից, և իսկապէս յիշեալ գիւղը տոգրւում է Նրասախի ջրով:

գ. Մխթար Այրիվանցեցին իր պատմութեան մէջ (հրատ. Մ. Էմիւնի, Մոսկվա, 1860, էջ 68) գրում է.

«Ապիրատ իշխան երկոտաւան հազար հեծելի — Սա շինեաց զկեչառուս և հան զառուս երեւանայ»:

Երեւանն ունի ներկայումս մի քանի առուներ. բուն քաղաքի անմիջական մերձակայութիւնները ջրում են Ղարաղալայից սկիզբն առնող Գետակաչայի ջրերով եւ Ջանգու գետից հանած առուներով: Անուրջ է մնում Ապիրատ իշխանի հանած առուի բուն աղբիւրը:

Ե. Բագրատունեաց իշխանութեան մայրաքաղաք ծառայող Նշանաւոր Անի քաղաքը թէեւ շինուած է Ախուրսանի եւ Մաղկոցաձորի հովիտներով կազմւող մի տեսակ թերակղզու վրայ, ինչպէս Արշակունիների ամրաց Անի-կամախը, բայց այդ ջրերը շատ խորն են ընկած, ամրութիւն ների և պարիսպների շրջանակից դուրս, և ազգաբնակչութիւնը գետնափոր անցքերով միայն կարող էր մօտենալ այդ ջրերին: Պրոֆ. Մառի պեղումները քաղաքի մէջ ի յայտ բերին վանազան ուղղութեամբ տարած քունգեր, որոնց հետքերը տառնում հասցնում են մինչև քաղաքի արեւմուտքում գտնուող, ոչ շատ հեռի ընկած Աւաջաղաղի ստորոտները: Աւաջաղաղից մեծ յորգութեամբ աղբիւրներ են դուրս ժայթքում, որ ընկան հոսանքով ուղղւում են դէպի Անին և Մաղկոցաձորի ջրերի մի մասն են կազմում:

ՄԵՍՐՈՊ ՄԱՅԻՍՏՐՈՍ ԱՐԲԵՊՍԿ.

(Շարունակելի) (4)